

մանկական նախափորձերս՝ սրբագրելով սիրահարական ոտանաւորներս եւ յետոյ, 1902ին, ուղարկած է զիս Վենետիկ, Մուրատ-Ռափայէլեան՝ բարեւելոյ համար իր տեղը Ալիշանի նուիրական աճիւնը»:

Լրացնելու համար իր կենսագրական գիծերը, ըսենք թէ մինչեւ 1905 Մուրատ-Ռափայէլեան⁸ մնալէ ետք, մեկնած է Պելճիքա հետեւելու Կանտի համալսարանին քաղաքային գիտութեանց ճիւղին, զոր աւարտած է 1909ին: Նոյն տարին Թուրքիա վերադարձած, երեք տարի պաշտօնավարած է Թօքաթ եւ Սվազ իբր ուսուցիչ, եւ հիմա, տարիէ մը ի վեր, կը վարէ Գրիգոր Լուսաւորիչ ուսումնարանի տեսչութիւնը:

Վարուժան իր բանաստեղծական նախափորձերը սկսած է 1902ին, երբ դեռ աշակերտ էր Գատըքէօյի Մխիթարեան վարժարանին մէջ⁹: Իր առաջին հրատարակուած քերթուածը *Ալիշանի շիրմին առջեւ* ոտանաւորն է, 1903-ին *Բազմավէպի* մէջ տպուած¹⁰: Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի մէջ շարունակած է մշակել իր բանաստեղծի հակումները, եւ իր այդ շրջանի քերթուածները ամփոփած է քիչ ետք, 1906-ին, *Սարսուռներ*¹¹ խորագրին տակ՝ տպագրուած Վենետիկ: Յաջորդ տարին, 1907, գրած է *Ջարդը*, որ հրատարակուած նախապէս *Անահիտի* մէջ, յետոյ առանձին հատորով¹²: Վարուժան իր նախափորձերուն մէջ իսկ գնահատուած, հետզհետէ սկսած է աշխատակցիլ բազմաթիւ թերթերու, ինչպէս *Անահիտ*, *Բազմավէպ*, *Գեղունի*, *Շիրակ*, *Հայրենիք*, *Ռազմիկ*, իսկ աւելի յետոյ, *Ազդակ*, *Ազատամարտ*, *Շանթ*, *Հայ գրականութիւն*, եւ այլն: Վարուժան իր Թուրքիա վերադարձէն ետք, 1910-ին, Պոլսոյ մէջ հրատարակած է իր քերթուածներու երկրորդը ժողովածուն, *Յեղին սիրտը*¹³, իսկ այս տարի¹⁴ հրատարակեց իր վերջին գործը, *Հեթանոս երգեր*:

Պատանի Վարուժանի վրայ ազդած են գաւառը՝ իր վիշտերով եւ հառաչներով, ու Պոլիսը՝ իր գեղեցկութեամբ եւ բնական հրապոյրներով: Բայց ամէնէն աւելի Վենետիկը եւ Պելճիքան յարուցած են իր մէջ բանաստեղծը: